Հետազոտական աշխատանք
Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Քննադատական մտածողության զարգացումը որպես կրթության առաջնային նպատակ

Կազմեց՝ Ադամյան Մարիամ
Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
Ղեկավար՝ Գրիգորյան Լուսինե

Վերապատրաստող կազմակերպություն՝
Կապանի N2 ավագ դպրոց ՊՈԱԿ

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն……2-3
Գրական ակնարկ……4-6
Գործնական համատեքստ……7
Հետազոտության ընթացք…… 7-11
Եզրակացություն……..12
Օգտագործված գրականության ցանկ……13
Հավելված……14-20

Ներածություն

Քննադատական մտածողություն ասելով հասկանում ենք պնդումների մտածված գնահատում, ինչպես նաև որպես <<մտածողություն մտածողության մասին>>:

<<Քննադատական մտածողություն>> եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է <<քննադատել>> բառին: Սակայն այս բառը ներառում է <<քննել>> և <<դատել>> բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն և եզրահանգումներ կատարելու կարողություններ ու հմտություններ, դիտողականություն: Այսինքն քննադատական մտածողության հմտություններին լավ տիրապետելու համար անհրաժեշտ է ունենալ, այսպես ասած, <<պոզիտիվ մտածողություն>>:

Ըստ հանրակրթության պետական նոր չափորոշչի սովորել սովորելու կարողունակության ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է սովորողների մոտ ձևավորել իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կրառելու ունակություններ:

Քննադատաբար մտածելու և վերլուծելու ունակությունը ձևավորվում է սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման դաստիարակության միջոցով:

Սովորելու ընթացքում սովորողները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

Անհատի իմացական ընկալումը վերափոխելու ամենաարդյունավետ մեթոդներից մեկը ինքնուրույն քննադատական մտածողության զարգացումն է: Ոլորտի մի շարք մասնագետներ նշում են, որ համապատասխանաբար մշակված կրթական ծրագիրը կարող է զարգացնել սովորողների ընդունակությունները, զինել նրան հմտություններով: Խորացնել նրա գիտելիքները, ձևավորել արժեքային համակարգ, հետևաբար նաև խթանել քննադատական մտածողության ձևավորումն ու արմատավորումը:

Փորձը ցույց է տալիս, որ ուսուցման գործընթացը պետք է լինի այնպիսին, որ սովորողները դառնան վերջինիս ակտիվ մասնակիցներն ու հետևորդները, որ պասիվ ունկնդրողից վերածվեն ակտիվ մասնակցի: Այդպիսի սովորողները դառնում են անկաշկանդ ու ինքնուրույն, առաջանում է մոտիվացիա ուսման նկատմամբ, ինքնաբերաբար զարգանում է վերլուծական միտքը՝ քննադատական մտածողությունը:

Ժամանակակից մանկավարժության մեջ վերջինս դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր:

Քննադատական մտածողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման վերլուծման բազմակողմանի գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացություն, գիտելիքների ձեռքբերում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում և իրավիճակի ու դեպքերի բազմակողմանի վերլուծության կարողություն ու հմտություն:

Հետազոտության արդիականությունը: Այսօր երիտասարդներից, ավելի քան երբևէ, պահանջվում է բարդ խնդիրներ լուծելու, հանգամանքները քննախույզ դիտարկելու, այլընտրանքային կարծիքները քննելու և լրջամիտ ու խելացի որոշումներ կայացնելու կարողություն, որը ինքնին քննադատական մտածողություն է: Ակնհայտ է նաև, որ քննադատաբար մտածելը հմտություն է, որ կարող է ձևավորվել և զարգանալ ուսումնական բարենպաստ միջավայրում:

Ժամանակակից մարդուն նոր սոցիալ-տնտեսական միջավայրում իրեն հարմարավետ ու լավ զգալու համար անհրաժեշտ է, որ նա կարողանա արագ հարմարվել կյանքի փոփոխվող իրավիճակներին, ինքնուրույն ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ դրանք կիրառի ծագող խնդիրների լուծման համար:

Քննադատական մտածողությունը կարևորագույն հմտություն է, որի հիմքերը պետք է դնի հանրակրթական դպրոցը, որի գերակա խնդիրն է աշակերտներին ոչ թե պատրաստի գիտելիք փոխանցել, այլ սովորեցնել մտածել, տեղեկույթը վերլուծել, քննարկել, իր կարծիքը հիմնավորել, հարցադրումներ անել, բանավիճել, քննադատաբար վերաբերվել այն ամենին, ինչ կարդում և լսում են, տեղեկատվական հեղեղի արդի պայմաններում:

Հետազոտության նպատակը: Աշխատության նպատակն է ուսումնասիրել քննադատական մտածողության տեխնոլոգիայի տեսական, մեթոդաբանական հիմքերը և կիրառման հնարավորությունները, արդյունավետությունը սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման գործում:

Բացահայտել, թե կրթական որ աստիճանում է սովորողների քննադատապես մտածելու, վերլուծելու կարողությունը, ներկայացնել, թե ուսունական գործընթացում քննադատական մտածողության զարգացմանն ուղղված ինչ քայլեր են ձեռնարկվում:

Ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց տվեցին, որ <<Գրականություն>> առարկայի դերը մեծ ու առաջնային է քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման գործում:

Հետազոտության խնդիրներն են՝

ա/ Դիտարկել սովորողների ճանաչողական կարողությունների դերն ու անհրաժեշտությունը:

բ/ Ներկայացնել քննադատական մտածողության գիտական հիմքերը:

գ/ Գնահատել, թե որքանով է <<Գրականություն>> առարկայի ուսումնական ծրագիրը նպաստում քննադատական մտածողության զարգացմանը:

դ/ Ուսումնական գործընթացում արդյունավետ հնարների, մեթոդների կիրառումով հասնել՝ քննադատական մտածողության զարգացմանը:

ե/ Հիմնավորել քննադատական մտածողության զարգացման կարևորությունը որպես որակի ապահովման հենասյունային բաղկացուցիչ:

զ/ Ձևավորել քննադատաբար մտծելու կարողություն ոչ միայն ակադեմիական առարկաների, այլ նաև իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ:

Գրական ակնարկ

Քննադատական մտածողության հիմնախնդիրը դռևս առաջացել է անտիկ փիլիսոփայության ակունքներում: Կան բազմաթիվ հետազոտություններ նվիրված քննադատական մտածողության ամբողջական հայեցակարգին, կառուցվածքին, նպատակներին, բաղադրիչներին, գործառույթներին, գործոններին, տեխնոլոգիաներին, զարգացման չափանիշներին և այլն:

Քննադատական մտածողության զարգացման յուրաքանչյուր փուլ կարևորվում է հաշվի առնելով ամեն մի աստիճանի բովանդակությունը, խնդիրները, մեթոդները, միջոցները:

Տարբեր հեղինակներ առաջ են բերում քննադատական մտածողության ամենատարբեր սահմանումներ: Ռոբերտ Յանգը նշում է, որ քննադատական

մտածողությունը նպատակասլաց, պատճառաբանված, նպատակի իրագործմանն ուղղված մտածողություն է ենթադրելով իմացական հմտությունների և ռազմավարությունների կիրառում:

Սալի Գլենն էլ գտնում է, որ քննադատական մտածողությունը ձևավորվել է բժշկության ասպարեզում որպես համակարգված կատեգորիա: Ինչպես բժշկության բնագավառում ցանկացած որոշում կարող է ճակատագրական լինել մարդու կյանքի համար, այնպես էլ քննադատական մտածողության մեջ նախքան որոշում ընդունելը անհրաժեշտ է գնահատել այդ որոշման ճիշտ կամ սխալ լինելը և հնարավոր ազդեցությունը:

Ռոբերտ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը:

Գրեթե բոլոր նշանավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է ուսումնական գործընթացում դասավանման ինտերակտիվ մեթոդների կիրառումը; Երբ սովորողն ակտիվորեն մասնակցում է ուսումական պարապմունքին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր դասընկերների կարծիքները, արտահայտած մտքերը, և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույնպես պիտի հիմնավորված լինի, քանի որ ուսուցչի և դասարանի կողմից առավել ընդունելի է հիմնավորված պատճառաբանված կարծիքը:

Քննադատական մտածողությանը հատուկ է երկու գործողություն՝ ենթադրությունները վերհանելը և վիճարկելը, ինչպես նաև այլընտրանքներն ուսումնասիրելը և պատկերացնելը: Սովորողի կամ ընդհանրապես անհատի մտածողությունը քննադատաբար մտածելու պայմաններում անցնում է հետևյալ փուլերով՝ խնդրի նույնականացում, խնդրի սահմանում, կիրառում և ինտեգրում:

Առաջին փուլում սովորողի մտածողությունը փորձում է վերհանել և ճանաչել խնդիրը, երկրորդ փուլում մտածողությունը դառնում է ուղղորդված և նպատակային: Այնուհետև խնդիրը ճանաչելուց հետո այն գնահատվում է և հատկապես ընկալվում: Սովորաբար խմբային քննարկումները, զրույց բանավեճերը, կլոր սեղանները նպաստում են, որ սովորող-անհատն առավել հստակ հասկանա խնդիրը և մտածի այլընտրանքային հնարավոր մոտեցումների մասին: Եթե քննադատական մտածողության նպատակը գիտելիքի ձեռքբերումն է, ապա այդ գիտելիքի կիրառումն ու ինտեգրումը ավելի կարևոր է:

Խիստ կարևորվում է նաև ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում: Ուսուցիչը սովորողներին քննարկումների միջոցով դրդում է վիճարկելու տարբեր գաղափարներ, կանոններ, ենթադրություններ, քանզի քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստանձնել գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն:

Ուստի պատահական չէ շատ գիտնականների այն պնդումը, որ ուսուցչի և սովորողի միջև երկխոսության և քննարակման ծավալումը քննադատական մտածողության ձևավորման և զարգացման առաջին գրավականն է: Բացի այդ դասավանդող ուսուցիչն առաջինը ինքը պետք է պատրաստ լինի վիճարկելու սեփական արժեքներն ու գաղափարները դրանով իսկ օրինակ ծառայելով մյուսներին:

Այսօր յուրաքանչյուր ուսուցիչ որոնումների մեջ է արդյունավետ մեթոդներ ու հնարներ գտնելու և գործնականում զարգացնելու սովորողի քննադատական մտածողությունը: Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին գործնականում դրանք կիրառելու հնարավորությամբ: Այդպիսի նորարարական մի համակարգ է քննադատական զարգացումը կարդալու և գրելու միջոցով /ՔՄԶԿԳՄ/ ծրագիրը, որի նպատակն է կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ, այսինքն գործունյա, քննադատաբար մտածող, ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում կողմնորոշվող անհատներ, որորնք կկարողանան ազատ ու անկաշկանդ արտահայտել իրենց մտքերը, ուշադիր ու հանդուրժող լինել ուրիշների կարծիքների հանդեպ, հարգել և ընդունել մյուսների տեսակետները և վստահաբար որոշումներ կայացնելու պատասխանատվություն ունենալ:

ՔՄԶԿԳՄ ծրագրի համակարգը ներկայացնում է ուսուցման գործընթացում հաճախակի կիրառվող ԽԻԿ մոդելը երեք փուլից բաղկացած մտածողության ընթացք, ուր աշակերտները ներգրավվում են դեռ նյութը սկսելուց առաջ /խթանում/, նյութը սովորելու /իմաստի ընկալում/, նյութը սովորելուց հետո /կշռադատում/:

Փորձը ցույց է տալիս, որ այս համակարգի արդյունավետ կիրառումը ինտերակտիվ մեթոդների ներառմամբ, և ուսուցման ճշգրիտ մեթոդների օգտագործումը, ամուր հիմք են հանդիսանում քննադատական մտածողության զարգացման համար:

Գործնական համատեքստ

Քաջ գիտակցելով, որ քննադատական մտածողության հիմնական նպատակը ուսումնական գործընթացն ակտիվացնելն է, որոշեցի հետազոտություն իրականացնել այն դասարաններում, որտեղ ունեմ պասիվ աշակերտների մի խումբ, և նրանք ավելի շատ լսողի դերում են, քան կատարողի, արտահայտվողի, վերլուծողի:

Հետազոտությունը կատարել եմ 7-8-րդ դասարաններում՝ <<Գրականություն>> առարկայի դասաժամերին: Քանի որ դասարանում սովորում են տարբեր ունակություններով և կարողություններով աշակերտներ, որոնց մեջ կան նաև այնպիսինները, որոնք ուսումնական պարապմունքներին կենտրոնանալու, արտահայտվելու, դասընկերների հետ շփվելու խնդիր ունեն, փորձել եմ նրանց մոտիվացնել խրախուսելով ու դրդելով դեպի ուսման գործընթացը:

Հետազոտության յուրաքանչյուր թեմա ուսումնասիրելիս դասերը կառուցվել են ԽԻԿ համակարգով ուսուցման ինտերակտիվ մեթոդների ներգրավմամբ: Ուսումանական պարապմունքի յուրաքանչյուր փուլ նպատակ է հետապնդել աշակերտակենտրոն ուսուցմամբ ձևավորել համագործակցային մթնոլորտ և զարգացնել քննադատական մտածողության համակարգը:

Հետազոտության ընացքը

Ա.Անափիոսյանը նշում է, որ երբ ուսումնասիրում ենք քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գրականությունում գոյություն ունեցող մոդելներ, ակնհայտ է դառնում, որ բոլոր գործոնները շատ թե քիչ չափով հիմնվում են դեռևս 1956թ. ականավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա, որը ներկայացնում է վեց մակարդակ՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ և գնահատում: Ներկայացվող տեսության կրթական նպատակները ուղղված են ուսումնասիրվող նյութի իմացության, ըմբռնման, կիրառման, վերլուծության, համադրման և գնահատման կարողությունների ձևավորմանը <<ի՞նչ գիտեմ>>, <<ի՞նչ եմ ստեղծում>> <<ի՞նչ կարող եմ մտածել >>:

Այս ամենը կարևորելով առաջնորդվել եմ վերոնշյալ տեսության կրթական նպատակներով և գործնական վերջնարդյունքներով, որոնք հանդիսանում են քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիաները:

Խթանման փուլում որպես ինտերակտիվ մեթոդներ կիրառել եմ <<Մտագրոհը>>, <<Մտքերի քարտեզագրումը>>,<<Պրիզման>>՝ նպատակ ունենալով խթանել աշակերտների հետաքրքրասիրությունը և ցանկությունը՝ նոր նյութը հետազոտելու գործում:Այս փուլում կարևոր գործոնն այն է,որ ուսուցիչը ուղղորդողի դերում է՝ ասպարեզը տրամադրելով աշակերտին:Աշակերտները սկսում են խորհել բուն թեմայի շուրջ՝սկսած վերնագրից,արտահայտում են կարծիքներ/և ճիշտ, և թյուր/, գրատախտակին կամ պաստառի վրա նշում ենք բոլորի /անհատական կամ խմբով/ ներկայացրած կարծիքները,տեսակետները:Այստեղ մենք ստանում ենք <<ի՞նչ գիտեմ>> հարցի պատասխանը:Յուրաքանչյուր արտահայտած մտքի կամ կարծիքի մասին տարվում է քննարկում և մտքերի փոխանակում,ի հայտ են գալիս անհամաձայնություններ:Այս ամենը նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտների հետաքրքրությունն ու ուշադրությունը կենտրոնացնելու համար՝ որպես քննադատական մտածողության ձևավորման գործիք:

Իմաստի ընկալման փուլում ամենակարևորն այն է,որ այստեղ պահպանվի խթանման փուլում ձեռք բերած ներգրավման աստիճանը և հետաքրքրությունը: Բացի այդ աշակերտները վերահսկում են իրենց ըմռնածը՝փորձելով նոր ստացված տեղեկատվությունը հարմարեցնել իրենց իմացություններին:

Դասի ընթացում ներգրավման աստիճանի բարձրացման և ընկալման խորացման համար հարմար եմ գտնում կիրառել «Մտածող գլխարկներ» մեթոդը, որը քննադատական մտածողության զարգացման մեթոդներից մեկն է: Մեթոդի էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր խումբ մտածում, բացահայտում և այնուհետև ներկայացնում է թեմայի կամ խնդրի մի որևէ կողմը: Պայմանականորեն այդ խմբերը կոչվում են Սպիտակ, Կարմիր, Դեղին, Սև, Կանաչ և Կապույտ գլխարկներ:Նախ աշակերտներին տրամադրում եմ բաշխիչ նյութը և հանձնարարում կարդալ այն: Այնուհետև յուրաքանչյուր խմբի տրամադրում են թերթիկներ, որոնց վրա գրված են, թե հարցի որ կողմը պետք է ներկայացնեն: Աշակերտներին օգնելու նպատակով այդ թերթիկների վրա գրում եմ, թե ինչ հարցերի նրանք պետք է պատասխանեն և այն բանալի բառերը, որոնք էլ ավելի դյուրին կդարձնեն նրանց գործը՝ իրենց նյութը ներկայացնելու համար:

Խմբերին տրամադրվող թերթիկներն այսպիսին են.

ԿԱՆԱՉ ԳԼԽԱՐԿ -Ներկայացնում է հարցի զարգացումն ու հեռանկարները: Առաջ է քաշում նոր գաղափարներ, հնարավոր տարբերակներ:

Բանալի հարցեր . Ի՞նչ է հնարավոր անել այս իրավիճակում…

Կա՞ն, արդյոք, այլ տարբերակներ…

Բանալի բառեր . Սա հնարավոր է դարձնում, որ…

Սա կարող է օգնել, որ…

Կարելի է այնպես անել, որ…

ԴԵՂԻՆ ԳԼԽԱՐԿ - Ներկայացնում է հարցի դրական կողմերը, առավելությունները, գնահատական է տալիս:

Բանալի հարցեր . Ո՞րոնք են առավելությունները…

Հնարավո՞ր է իրագործել …

Ինչպիսի՞ն կլինի արդյունքը…

Ո՞րն է հաջողության գրավականը…

Բանալի բառեր . Լավ է, որ…

Հրաշալի է, որ…

Շատ կարևոր է, որ…

Սա նպաստում է, որ…

ՍՊԻՏԱԿ ԳԼԽԱՐԿ - Հարցի մասին ներկայացնում է միայն չեզոք փաստարկներ, տեղեկատվություն:

Բանալի հարցեր . Ի՞նչ տվյալներ կան…

Ի՞նչ տվյալներ են պակասում…

Ինչպե՞ս գտնել անհրաժեշտ տվյալները…

Բանալի բառեր .Հայտնի է, որ…

Փաստ է, որ…

Հետազոտությունները ցույց են տվել ,որ…

ԿԱՊՈՒՅՏ ԳԼԽԱՐԿ - Վերլուծում է քննարկման, մտածողության ընթացքը, դատողություններ է անում մտածողության մասին, ամփոփում:

Բանալի հարցեր . Որո՞նք են քննարկան այս փուլի արդյունքները…

Ի՞նչ բաց թողեցինք ,..

Ինչի՞ մասին կարելի է էլի մտածել…

Ո՞րն է լինելու մտածողության հաջորդ քայլը…

Բանալի բառեր . Եկեք փորձենք հարցին նայել նաև այս կողմից…

ՍԵՎ ԳԼԽԱՐԿ - Ներկայացնում է հարցի վտանգավոր հետևանքները, քննադատում է:

Բանալի հարցեր . Որքանո՞վ է վտանգավոր…

Ի՞նչ խնդիրներ ու վտանգներ կարող են առաջանալ…

Բանալի բառեր . Սխալ է…

Վտանգավոր է…

Խանգարում է…

Չի կարելի…

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ - Հարցի մասին արտահայտում է հույզեր, զգացմունքներ. վերաբերմունք, նախազգացումներ:

Բանալի հարցեր . Ի՞նչ եմ զգում հարցի առնչությամբ…

Ինձ ի՞նչ է թվում…

Ի՞նչն է ինձ դուր գալիս, ի՞նչը՝ ոչ…

Բանալի բառեր . Ինձ թվում է, որ…

Ես նախազգում եմ, որ…

Ինձ դուր է գալիս, որ…

Ինձ դուր չի գալիս, որ…

Խմբերում աշխատանքն ավարտելուց հետո նրանք հերթականությամբ ներկայացնում են իրենց աշխատանքը: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո խմբի անդամները պատասխանում են մյուս խմբերի հարցերին կամ, եթե հարկ է, որոշ պարզաբանումներ են կատարում: Եթե լինում են հարցեր, որոնք անպատասխան են մնում, ապա ուղղորդող հարցերի միջոցով օգնում եմ դրանց վերհանմանը:

Այսպիսով, նյութն ուսումնասիրվում է տարբեր կողմերից և պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները:

«Մտածող գլխարկներ» մեթոդը հնարավորություն է տալիս նաև աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ձևավորում է ապրումակցում :

Կշռադատման փուլում սովորողն արդեն լիովին տիրապետում է ուսումնական նյութին, ընկալել է գաղափարական բովանդակությունը, գլխավորը տարանջատել է երկրորդականից, մանրամասն վերլուծել է գրական երկի առանձին մասերը, արդեն իսկ հեշտորեն, ազատ ու անկաշկանդ կարողանում է արտահայտել իր կարծիքը,մտքերը, համեմատում և հակադրում է հերոսներին, նրանց <<կերպարները>> բերում իրական կյանք, մտնում <<կերպարի մեջ>>՝ հասկանում նրա դրական և բացասական կողմերը:

Նպատակահարմար է այս փուլում օգտագործել «Ապագայի անիվ», <<Կլոր սեղան>>,<<5 մատի>> մեթոդները,որոնց օգնությամբ զարգացնում է աշակերտների տրամաբանությունը, ձևավորում է թեման վերլուծելու, պատճառահետևանքային կապը վեր հանելու կարողություններ, ինչը շատ կարևոր է գրականության

դասավանդման մեջ:Իսկ կերպարների վերլուծության համար <<Վեննի դիագրամ>> մեթոդն է արդյունավետ՝ որպես փոխգործուն կամ ինտերակտիվ մեթոդ:

Աշակերտները լրացրել են նաև մոտիվացիայի ռուբրիկ, որի արդյունքները ներկայացված են դիագրամի միջոցով.



Ինչպես երևում է դիագրամից, աշակերտները հիմնականում գտնում են, որ ակտիվ են եղել, նյութը հասկացել են, ուշադիր են եղել, կիրառված մեթոդները իրենց դուր են եկել, ունեն ուսումնական առաջընթաց, առաջադրանքները հիմնականում մատչելի էին.մոտիվացիան առկա էր:

Տնային աշխատանքի ստուգումը ցույց տվեց, որ բոլոր աշակերտներն իրենց ազատ շարադրանքի մեջ ներկայացրել են սիրո, ջերմ վերաբերմունքի, հոգատարության,կարեկցանքի զգացողություններ կերպարների նկատմամբ՝արտահայտված մարդասիրական ու լավատեսական մղումներով:

Եզրակացություն

Հետազոտության ընթացքը ցույց տվեց,որ քննադատական մտածողություն զարգացնելու համար անհրաժեշտ է հենվել նշանավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված վեց աստիճանակարգերի վրա՝ գիտելիք-ընկալում-կիրառում-վերլուծություն-սինթեզ-գնահատում:

Գիտելիքի ձեռքբերման մակարդակում աշակերտը կարող է հիշել,տարբերակել, մտաբերել կամ գտնել ուսուցման ընթացքում ներկայացված տեղեկատվությունը:

Ընկալման մակարդակում աշակերտը կարող է ցույց տալ,որ հասկացել է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերով,արտահայտել իր ձևակերպում-ներով:

Կիրառման մակարդակում աշակերտը կարող է տեղեկատվությունը կիրառել՝ այն օգտագործելով կոնկրետ գործողության մեջ:

Վերլուծության մակարդակում աշակերտը կարող է ճանաչել տեղեկատվության հիմնական կազմվածքն ու կառուցվածքը,որոշել դրանց միջև կապը,փաստերը տարբերել ենթադրություններից:

Սինթեզի մակարդակում աշակերտը կարող է տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր անհատական տեսակետը ներկայացնելու համար:

Գնահատռման մակարդակում աշակերտը կարողանում է ուսումնական նյութի, օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անել:

Քննադատական մտածողության զարգացմանն է ուղղված համագործակցային ուսուցումը: Սա իրենից ենթադրում է թիմային աշխատանք, որտեղ բոլոր աշակերտներն անկաշկանդ արտահայտում են իրենց կարծիքը, դատողությունները, տեսակետները,ձևավորվում է նաև վստահություն՝ սեփական ուժերի նկատմամբ, ինքնագնահատման, մյուսներին գնահատելու կարողություններ:

Հետազոտական աշխատանքի արդյունքները փաստում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան նպաստում է ոչ միայն սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչի մյուս բաղադրիչների՝ գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների ու համակարգի ձևավորմանը, հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1.Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան-2002
2.Ա.Անափիոսյան, Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական, Ուսումնասիրություն ԲՀԻ Օժանդակության հիմնադրամի ծրագրերի շրջանակներում, 2012, 63 էջ:
3.Հարությունյան Գ .Ն ., «Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, N6, 2012թ., էջ 28-33:
4.Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004
5.ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային ինստիտուտ: Ուսուցիչների հինգօրյա վերապատրաստումների պլան և նյութեր, 2007:
6.Ա. Օհանյան,Ք.Անտոնյան,Ն.Խաչատրյան և ուրիշ.,Դասընթացի մշակում և կառավարում:Ուսումնամեթոդական ուղեցույց,Ե.,2010

Հավելված

Դասի պլան 1

Առարկա՝ Գրականություն

Դասարան՝ 8-րդ

Դասի թեման՝ Նար-Դոս <<Ես և Նա>> պատմվածքը

Նպատակներ՝

- Ուսումնական նյութի բովանդակության ուսումնասիրում,հետազոտում
- Տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակահատվածի ազդեցության,տեքստի բառապաշարի մասին գնահատական տալ
- Կերպարների վերլուծություն,կոնֆլիկտի բացահայտում
- Գրական հերոսի դիմանկարը կազմելու կարողությունների զարգացում
- Հիմնավորել գիտելիքները տեքստում մարդկային ապրումի՝սիրո,մենության, կարոտի,դավաճանության և այլնի մասին
- Նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով /բանավոր, գրավոր/ ներկայացնելուն

Վերջնարդյունքներ՝

- Վերլուծի գրողի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը:
- Մեկնաբանի՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, տեքստի ասելիքի, ոճի, բառապաշարի առանձնահատկությունները:
- Վերլուծի տեքստի գլխավոր գաղափարը:
- Որոշի տեքստի հիմնական ասելիքի արդիականությունը:
- Բացահայտի գրական կերպարի առանձնահատկությունները:
- Հակադրի տեքստի կերպարներին:
- Հիմնավորի իր տեսակետը գրական երկից բերված օրինակներով:
- Ներկայացնի տեքստում հույզի, զգացմունքի, ապրումի արտահայտությունը,
- Տարբերակի գրական երկի հեղինակին և պատմողին
- Բանավոր և գրավոր մեկնաբանի գրական երկը, կանխատեսի գրական երկի ավարտը:

Միջառարկայական կապ՝ պատմություն, աշխարհագրություն,կերպարվեստ,հայոց լեզու,թատրոն

Ներառարկայական կապ՝ ուսումնական նյութի բովանդակության արդիականությունը, միջավայրը

Խաչվող հասկացություններ՝ պատճառ և հետևանք,անհատների փոխհարաբերություններ

Դասի տիպը՝ գիտելիքների համակարգման դաս

Դասին օգտագործվող դիդակտիկ պարագաներ՝ դասագիրք,տետր,գրիչ,պաստառ, նկարներ,գրատախտակ,համակարգիչ

Դասի ընթացքը

Խթանման փուլի նկարագրությունը

Ուսուցիչը գրատախտակին գրում է «Կորուստ» բառը: Մտագրոհի միջոցով հարցեր է ուղղում դասարանին՝ խոսելով մարդկային զգացմունքների՝ սիրո, հիասթափության, կորստի և դրանց հետևանքների մասին: Կազմում են պրիզմա:



Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը

Այս փուլում հնչում է ուսուցչի կենդանի խոսքը:Համառոտ ներկայացնում է պատմվածքի արտահայտած գաղափարը:

Ապա լսում են աուդիոնյութ, որը պատմում է Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի «Ես» հատվածը:
https://www.facebook.com/l.php?u=https%3A%2F%2Fyoutu.be%2FHnTw25gdAgY&h=3AQHEZnr_

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը

Աշակերտները բաժանվում են մի քանի խմբի և <<Քառաբաժանի>> օգնությամբ գրառում են իրենց տպավորությունները,այնուհետև ներկայացնում գրանցումները, համեմատում և քննարկում:

Ի՞նչ տեսաք:	Ի՞նչ զգացիք:
Ի՞նչ լսեցիք:	Ի՞նչ հասկացաք:

Ամփոփում են և գնահատվում:
Տնային հանձնարարություն-Ներկայացնել հատվածի բովանդակությունը,կատարել գրառումներ գրականության տետրերում:

Դասի պլան 2

Առարկա՝ Գրականություն

Դասարան՝ 8-րդ

Դասի թեման՝ Մուրացան <<Հասարակաց որդեգիրը>> պատմվածքը

Նպատակներ՝

- Ուսումնական նյութի բովանդակության ուսումնասիրում,հետազոտում
- Տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակահատվածի ազդեցության,տեքստի բառապաշարի մասին գնահատական տալ
- Կերպարների վերլուծություն,կոնֆլիկտի բացահայտում
- Գրական հերոսի դիմանկարը կազմելու կարողությունների զարգացում
- Հիմնավորել գիտելիքները տեքստում մարդկային ապրումի մասին
- Նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով /բանավոր, գրավոր/ ներկայացնելուն

Վերջնարդյունքներ՝

- Վերլուծի գրողի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը:
- Մեկնաբանի՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, տեքստի ասելիքի, ոճի, բառապաշարի առանձնահատկությունները:
- Վերլուծի տեքստի գլխավոր գաղափարը:
- Որոշի տեքստի հիմնական ասելիքի արդիականությունը:
- Բացահայտի գրական կերպարի առանձնահատկությունները:

- Հիմնավորի իր տեսակետը գրական երկից բերված օրինակներով:
- Ներկայացնի տեքստում հույզի, զգացմունքի, ապրումի արտահայտությունը:
- Բանավոր և գրավոր մեկնաբանի գրական երկը, կանխատեսի գրական երկի ավարտը:

Դասի տիպը՝ գիտելիքների համակարգման դաս

Դասին օգտագործվող դիդակտիկ պարագաներ՝ դասագիրք,տետր,գրիչ,պաստառ, նկարներ,գրատախտակ,համակարգիչ

Միջառարկայական կապ՝ պատմություն, աշխարհագրություն, հայոց լեզու, երաժշտություն

Ներառարկայական կապ՝ ուսումնական նյութի բովանդակության արդիականությունը, միջավայրը

Խաչվող հասկացություններ՝ անհատներ և հարաբերություններ

Դասի ընթացքը՝

Խթանում- <<Մտքերի քարտեզագրում>> մեթոդի կիրառում:Գրատախտակին գրվում են աշակերտների արտահայտած մտքերը:

Իմաստի ընկալման փուլ- «Սիրահարի բաղձանքը» երգի հնչյունների ներքո գրատախտակին կազմվում է պատմվածքի դիպաշարի և կերպարների շուրջ գաղափարների 2 քարտեզ:

<<Հարց ու պատասխան>> մեթոդով ամբողջացվում է պատմվածքի գաղափարական բովանդակությունը:

1.Որտե՞ղ և ի՞նչ միջավայրում էին կատարվում պատմվածքի դեպքերը:

2.Ինչպիսի՞ն էր Գևորգը, որի համար Շառլոտան նրան սիրում և հարգում էր:

3.Որքա՞ն էր Գևորգի առաջին աշխատավարձը, և ինչո՞ւ Գուստավը նրան հատկացրեց ամսական գումար:

4.Ինչպե՞ս Գևորգը համոզվեց, որ Շառլոտան իրեն չի սիրում:

5.Ինչու՞ էր Գևորգը բարձրաստիճան հյուրերի ուշադրությունից ամաչում:

6. Ինչու՞ պետք է Գևորգը «ստիպեր» իր մորը լվացքարանում կրկին աշխատելու:

7.Բացի ուսման խոստումից, էլ ինչո՞վ էր Գևորգը ոգևորվել, որ աշխատանքից դուրս եկավ:

8. Ինչո՞ւ չէր վայել Գևորգին փականագործի գործը:

9. Ազգային մեծամեծերը ինչու՞ ստորագրեցին:

Կշռադատման փուլ- << 5 մատի>> մեթոդով բնութագրել փականագործ Գևորգին և անգործ Գևորգին:

<<Կլոր սեղան >> մեթոդով անդրադառնալ հետևյալ հարցերին՝

1.Գևորգը ե՞րբ է հասկանում, որ թշվառ վիճակում է գտնվում:

2. Մոր սիրտը գուշակո՞ւմ էր Գևորգի ապագան :

3. Գևորգը ինչու՞ նոր աշխատանք չփնտրեց :

4. Կարել ի է արդյո՞ք վստահել հարբած մարդուն, ինչու՞:

5. Եթե դու լինեիր մոր փոխարեն, ի՞նչ խորհուրդ կտայիր Գևորգին:

6. Ի՞նչ կանեիք դուք Գևորգի կարգավիճակում:

Կարծիքները հավաքագրվում են,կազմվում է T-աձև աղյուսակ՝ դրական և բացասական տեսակետների շուրջ:

Տնային աշխատանք- Վերլուծել Գևորգի դիրքորոշումն իր անելիքների վերաբերյալ և նամակ գրել Գևորգին:

Դասի պլան 3

Առարկան՝ Գրականություն

Դասարանը՝ 7-րդ

Դասի թեման՝ <<Ավելորդը>> պատմվածքի գլխավոր հերոսների բնութագիրը

Նպատակներ՝

- Ներկայացնել պատմվածքի ժանրային բնութագիրը:
- Նպաստել արձակ տեքստի շուրջ աշխատելու տեխնիկային:
- Վերլուծել կերպարները՝ ինքնուրույն դատողություններ կատարելով :

Վերջնարդյունքներ՝

- Կկարողանան ընթերցելուն զուգահեռ աշխատել արձակ տեքստի շուրջ:
- Կներկայացնեն պատմվածքի գաղափարական բովանդակությունը:
- Կբնութագրեն կերպարներին՝ իրենց արարքների և շարժառիթների մեջ:
- Կձևավորեն դատողական վերաբերմունք:
- Կզարգացնեն քննադատական մտածողություն:
- Կզարգացնեն համագործակցեկու,խմբով աշխատելու կարողություն:

Միջառարկայական կապ՝ պատմություն, աշխարհագրություն, հայոց լեզու

Ներառարկայական կապ՝ ուսումնական նյութի բովանդակության արդիականությունը, միջավայրը

Խաչվող հասկացություններ՝ պատճառ և հետևանք, անհատների հարաբերություններ

Դասի տիպը՝ համակցված

Դասին օգտագործվող դիդակտիկ պարագաներ՝ դասագիրք,տետր,գրիչ,պաստառ, նկարներ,գրատախտակ,համակարգիչ

Մեթոդը՝ <<Մտածող գլխարկներ>>

Նյութերը՝ թղթե գլխարկներ, գունավոր մատիտներ,պաստառ

Դասի ընթացքը

Խթանում:Առաջադրված հարցերով վերհիշել պատմվածքի բովանդակությունը, գործողությունների զարգացման ընթացքը: /10 րոպե/

Իմաստի ընկալում: ԿԱՆԱՉ ԳԼԽԱՐԿ -Ներկայացնում է հարցի զարգացումն ու հեռանկարները: Առաջ է քաշում նոր գաղափարներ, հնարավոր տարբերակներ:

Բանալի հարցեր . Ի՞նչ է հնարավոր անել այս իրավիճակում…

Կա՞ն, արդյոք, այլ տարբերակներ…

Բանալի բառեր . Սա հնարավոր է դարձնում, որ…

Սա կարող է օգնել, որ…

Կարելի է այնպես անել, որ…

ԴԵՂԻՆ ԳԼԽԱՐԿ - Ներկայացնում է հարցի դրական կողմերը, առավելությունները, գնահատական է տալիս:

Բանալի հարցեր . Ո՞րոնք են առավելությունները…

Հնարավո՞ր է իրագործել …

Ինչպիսի՞ն կլինի արդյունքը…

Ո՞րն է հաջողության գրավականը…

Բանալի բառեր . Լավ է, որ…

Հրաշալի է, որ…

Շատ կարևոր է, որ…

Սա նպաստում է, որ…

ՍՊԻՏԱԿ ԳԼԽԱՐԿ - Հարցի մասին ներկայացնում է միայն չեզոք փաստարկներ, տեղեկատվություն:

Բանալի հարցեր . Ի՞նչ տվյալներ կան…

Ի՞նչ տվյալներ են պակասում…

Ինչպե՞ս գտնել անհրաժեշտ տվյալները…

Բանալի բառեր .Հայտնի է, որ…

Փաստ է, որ…

Հետազոտությունները ցույց են տվել ,որ…

ԿԱՊՈՒՅՏ ԳԼԽԱՐԿ - Վերլուծում է քննարկման, մտածողության ընթացքը,

դատողություններ է անում մտածողության մասին, ամփոփում:

Բանալի հարցեր . Որո՞նք են քննարկան այս փուլի արդյունքները…

Ի՞նչ բաց թողեցինք ,..

Ինչի՞ մասին կարելի է էլի մտածել…

Ո՞րն է լինելու մտածողության հաջորդ քայլը…

Բանալի բառեր . Եկեք փորձենք հարցին նայել նաև այս կողմից…

ՍԵՎ ԳԼԽԱՐԿ - Ներկայացնում է հարցի վտանգավոր հետևանքները, քննադատում է:

Բանալի հարցեր . Որքանո՞վ է վտանգավոր…

Ի՞նչ խնդիրներ ու վտանգներ կարող են առաջանալ…

Յուրաքանչյուր խումբ՝ ելնելով գլխարկի առանձնահատկություններից, ներկայացնում է իր աշխատանքը:

Կշռադատում: Քննարկել՝

ա.Պատմվածքի վերջում ինչպե՞ս է Հաճի աղան բացատրում <<ան ավելորդ է>> արտահայտությունը:

բ.Մահից առաջ ինչու՞ է խոստովանահորը ասում.<<Մեղա՛ քեզի, մեղա՛…>>:

<<Ապագայի անիվ>> մեթոդի կիրառում. աղյուսակով ներկայացնել պատմվածքի պատճառն ու հետևանքը:

Տնային առաջադրանք: Գրել շարադրանք՝ <<Կյանքում ի՞նչն է ավելորդ>>, <<Կյանքում ի՞նչն է կարևոր>> վերնագրերով: